

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

## ՔԱՆՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ԱԿՏ

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Արցախի պետական համալսարանի  
մանկավարժության և հոգեբանության ամբիոն, Կ.Պ.Թ., դոցենտ  
[lus78@vanderu](mailto:lus78@vanderu)

Թաներ Աքչամի «Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ» գրքում ընթերցում ենք. «Ես մորթեցի հայերին Բողազլըյանում, ես դարձա գավառապետի պաշտոնակատար: Ես նրանց սպանում եմ նաև այստեղ: Ես կդառնամ գավառապետ կամ գուցե նաև նահանգապետ: Եվ, իրոք, դեռևս իբրև Բողազլըյանի մարզի ղեկավար աշխատելիս նա առաջխաղացում է ստացել՝ 1915 թ. Օգոստոսի 19-ից մինչև հոկտեմբերի 8-ը աշխատելով իբրև Յոզղաթի գավառապետ, իսկ այնուհետև նորից է պաշտոնի բարձրացում ստացել»<sup>1</sup>:

«Փառապանծ անցյալի և անհրապույր ներկայի միջև ընկած ահռելի անդունդն անցյալի վերադարձի ձգտումը դարձնում է համազգային գաղափար: Ընդ որում, որքան ավելի վատ է ներկայիս վիճակը, այնքան մեծ է անցյալի իդեալականացման միտումը: Այդ իրավիճակը մարդկանց մեջ անասնական բնագոյների զարթոնքի պատճառ է հանդիսանում, նրանք վայրի գազաններից էլ վտանգավոր են դառնում»<sup>2</sup>: Սա ընդամենը մեկ օրինակ է, որը դիպուկ զուգորդական կապ է ստեղծում Օսմանյան կայսրության և այսօրվա Ադրբեջանական իշխանությունների քաղաքական ու ռազմական դիրքորոշումների միջև: Սա 21-րդ դարի ահաբեկչական ակտի աղաղակող օրինակ է, որն, առաջին հերթին, ունի մարդկանց նկատմամբ սոցիալական, ազգային բռնության կիրառման հոգեբանական ահաբեկչություն և: Մինչդեռ իրականում հոգեբանական ահաբեկչության դիմում են ցածր ինքնագնահատականի, ուշադրության, հարգալից վերաբերմունքի պակաս ունեցողները: Իրականում գլուխ կտրողի կերպարով, որը Սաֆարովի պես շուտով կմիֆականացվի, խոսում է ադրբեջանական հանրույթը, որն էթնոգենեզի լիարժեք գործընթաց չապրելով շարունակում և դեռ կշարունակի ախտաբանական սուբլիմացիայի այնպիսի դրսևորումները, ինչպիսին, օրինակ, քառօրյա պատերազմի սանձազերծումն է: Սա այն գարիուրելի հեռանկարի դրսևորումներից մեկն էր, որ կանխատեսել է Թաներ Աքչամը՝ թուրք մտավորականը, իր գիրքը շարադրելիս: Մենք այստեղ

<sup>1</sup> **Թաներ Ա.**, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ, Հայոց ցեղասպանությունը և էթնիկ գտումները Օսմանյան կայսրությունում, «Տիգրան Մեծ» հրատ., Եր., 2015, էջ 268:

<sup>2</sup> **Ակչամ Դ.**, Турецкое национальное “я” и армянский вопрос. <http://www.armenianhouse.org/akcam/akcam-ru.html>:

ամնչվում են հերոս և հակահերոս արժեհամակարգերի ներհակ բևեռներին: Ասում ենք հարաբերվելով համամարդկային արժեքներին ազգային արժեհամակարգը նոր բովանդակություն և իմաստ է ստանում՝ դառնալով անձի, հանրության ինքնության արդիականացման գործընթացը սնուցող միջավայր: Մինչդեռ ոչ մի խոսք չի կարող լինել ազգային և համամարդկային արժեքների զուգամիտման տրամաբանության մասին՝ Ադրբեջանի քաղաքականության, դիվանագիտության, ինչու չէ նաև ռազմական ոլորտին ամնչվող և ոչ մի հարթությունում: Եթե գլուխ կտրելը, ինչպես դա ամրագրված է «Դեղե Զյորքյութ» եպոսում ստատիկ արժեք է և նույնիսկ 21-րդ դարում որևէ փոփոխության չի ենթարկվել, ապա մենք գործ ունենք արդեն համամարդկային արժեհամակարգի դեգրադացման կամ երոզիայի երևույթների հետ: Ազրեսիան, որը դրսևորվեց ապրիլյան պատերազմի ահաբեկչության ակտով ունի սոցիալ-հոգեբանական կոնկրետ նախադրյալներ: Ինքնության խնդիրներ ունեցող հանրության մոտ, որտեղ սոցիալականության երևույթը շարունակում է մնալ մշուշոտ, ազրեսիան որպես կանոն ստանում է հոտային բնագրային վարքագծի ավելի վաղ ձև: Չկա և դեռևս չի կարող ձևավորվել անցյալի հետ անհրաժեշտ այն հուզական կապը, որով սերունդը դաստիարակվում և հոգեփոխվում է: Թերևս սա է նաև այն առանցքային պատճառներից մեկը, որով ադրբեջանական հանրության ներկայացուցիչներից շատերն ապրում են ապամարդկայինացված /դեհումանիզացված/ ներկա, մինչդեռ ապրիլյան էսկալացիան և քառօրյա պատերազմի առանձին դրվագները ոչ միայն խոչընդոտ են թշնամու կերպարի տրանսֆորմացիայի համար, այլ էսկալացիայի պերմանենտ լարվածության հիմք են: Այստեղ կա բնագրի երևույթը, ինչն անհնար է դարձնում քաղաքական իրականության հեռանկարը Ղարաբաղա-ադրբեջանական կոնֆլիկտի լուծման պարագայում:

Հայոց բանակի զինվորի կտրած գլխի լուսանկարի ակտիվ շրջանառումը սոցիալական ցանցերում նպաստել է բնակչության մոտ խուճապային տրամադրությունների արթնացմանը: Իրականում սկսել է ակտիվանալ մարդկանց իռացիոնալ մտածողությունը, որը նաև ուղիղ կապ ունի խուճապային տրամադրությունների հետ: Առանց իռացիոնալ փաստարկման շարժման մեջ են դրվում մարդու իռացիոնալ հոգեկան ուժերը, ինչը նպաստում է զտոգվածային կոնֆորմիզմի առաջացմանը: Հենց այսպիսի տեղեկատվական իշխանության տակ մարդիկ սկսում են իռացիոնալ որոշումներ կայացնել, ինչը նշանակում է թիկունքում անկազմակերպ վարք որդեգրել:

Ահաբեկչական ակտը սոսկ սանձազերծված ռազմական գործողություններով չէ, որ իրականություն դարձավ: Ահաբեկչության նպատակային օպերացիաներ կազմակերպվեցին տեղեկատվական դաշտում: Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել սոցցանցերում տեղեղրված կյուլթերից, որոնք ահաբեկչական ակտի յուրատիպ դրսևորումներ են: Օրինակ, Իրանի Արդեբիլի շրջանում ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի ներկայացուցիչ Հ.Ամիրիին հայտարարեց, որ իրանցիները պատրաստ են կռվել Ղարաբաղի համար, ինչն, իր կարծիքով, «իսլամական աշխարհի մի մասն է և պետք է

վերադարձվի Ադրբեջանին»: Յ. Ամիլին իր խոսքը հիմնավորեց ԻԻՅ հոգևոր առաջնորդի նախկինում հնչեցրած այն արտահայտությամբ, որ «Ղարաբաղը հանդիսանում է իսլամական աշխարհի մաս, և նրա համար զոհվածները համարվում են **շեհիդներ**»: Այսինքն՝ անել ամեն բան, Ալլահի հաճությանը արժանանալու համար: Իսկ Մ. Սաակաշվիլին, Ադրբեջանին իր գորակցությունը հայտնեց յուրօրինակ ձևով՝ ֆեյսբուքյան էջում տեղադրելով 2012 թ. ԱՅ Միլի մեջլիսում իր ելույթը և ադրբեջաներենով ավելացնելով 1918 թ. Ադրբեջանի Ազգային ժողովի նախագահ Մ. Ռասուլզադեի խոսքերը. «Bir kərə yəfksələn bayraq bir daha etməz!», ինչը թարգմանաբար նշանակում է «Բարձրացված դրոշը այլևս չի իջեցվի»:

Ադրբեջան կատարած այցից հետո Թուրքիայի նախագահ Էրդողանը հայտարարեց. «Հայաստանը կրակի հետ է խաղում: Դիմակայությունն ավելի ուժեղ է դարձնում Ադրբեջանին և Իլիամ Ալիևին»: Էրդողանը հիշատակեց նաև Թուրքիայում ապրող հայերի մասին. «Թուրքիայում բնակվում է մինչև 100.000 հայ, որոնցից 50.000-ը Թուրքիայի քաղաքացի չէ: Մենք հանդուրժողական վերաբերմունք ենք ցուցաբերում մշտական բնակության թույլտվություն չունեցողների հանդեպ: Մենք ցուցադրում ենք մեր բարի կամքը»:

Քառօրյա պատերազմի ահաբեկչական ակտը ծնեց անորոշության մի վիճակ, որն օրինաչափորեն առաջացրեց հոգեկան լարվածություն: Այստեղ ևս նշենք, որ արցախյան պատերազմի տրավմատիկ փորձը կարող է ինտենսիվ դարձնել վախի զգացողությունը: Վախի զգացումը չի խանգարում մեզ և չի սպառնում մեր հոգեկան առողջությանը, եթե մենք այն պահում ենք բանականության սահմաններում: Մենք պետք է պատկերացնենք ինչ սպառնալիք կարող է լինել և թիկունքում գտնվելով մշակենք ճիշտ գործելակերպ:

Կարծում ենք, որ ռազմական գործողությունների սթրեսսածին տարրերի ազդեցությունը արական սեռի ներկայացուցիչների մոտ որոշ չափով մեղմ էր, քանի որ հետպատերազմյան շրջանում ուսումնական մարզումները, իսկ դպրոցներում ռազմագիտության դասերը կազմակերպվում էին ծայրահեղ պայմաններին առավելագույնս մոտ լինելու ձևով:

Ահաբեկչական տեղեկատվական հեղեղը շատերի մոտ առաջացրեց զոհային վիճակ, և շատերի մոտ կարելի էր նկատել զոհի սոցիալական դերի գործառնությունները: Մ. Օդինսովայի բնորոշմամբ «զոհը» զոհային առանձնահատուկ ներքին ակտիվությամբ աչքի ընկնող անձն է /կախվածության և անօգնականության զգացում, չքննադատելու հակում/, որն ուղղված է այնպիսի գործողությունների ու արարքների վրա, որոնք նրան դարձնում են զոհի խաղացող /զոհի խաղացող դերը/ կամ սոցիալական տիպը /զոհի սոցիալական դերը/<sup>1</sup>:

---

<sup>1</sup> *Одинцова М.*, Ролевая виктимность в поведении подростков из социально незащищенных семей // Электронный журнал «Психологическая наука и образование» [www.psyedu.ru](http://www.psyedu.ru) /ISSN: 2074-5885/ E-mail: [psyedu@mgppu.ru](mailto:psyedu@mgppu.ru) 2012, №3. С. 2.

Չոհի սոցիալական դերը դա վերագրված հարաբերությունների վերլուծության միավոր է, որը համաձայնեցված է գոհային անհատի այնպիսի առանձնահատկությունների հետ, ինչպիսիք են աուտոագրեսիան, անօգնականությունը, կախվածությունը և այլն, որոնք նպաստում են նրա ստիգմատիզացիային, սոցիալական հարաբերություններում մեկուսացմանը, ինչը ձևախեղում է նրա մոտակա և հեռակա նորմալ կենսագործունեություն ծավալելու հեռանկար ունենալու հնարավորությունը<sup>1</sup>:

Չոհի սոցիալական վիճակը շատերին դրդեց շահարկել ստեղծված լարվածությունը, իսկ սա առաջացավ ինքնագիտակցության սահմանափակումների արդյունքում, որից հաճախ ածանցվում է պրագմատիկ ենթատեքստը:

Եթե կան մարդիկ ում մոտ հոգեկան շեղման, խանգարման երևույթներ կան, խուճապի ժամանակ դրանք հիմնականում սրվում են: Ասեմ, որ գոհված ազատամարտիկների և ընդհանրապես հոգեբնական խորը տրավմա ապրած բնակչության շրջանում ևս խուճապային տրամադրությունները կարող են հոգեկան անհավասարակշռության ֆոն ստեղծել օրգանիզմում: Սա անցյալի փորձի և դառը հիշողության վերադարձն է՝ գուգորդական այնպիսի կապերով, որոնք ստեղծվում են այսօրվա համանման դեպքերի և իրադարձությունների կրկինությամբ:

Քառօրյա պատերազմի ահաբեկչական ակտը կարելի է ասել հաղթահարվել է մի շարք դրական սոցիալ-հոգեբանական երևույթներով, որոնցից արժե առանձնացնել կամավորականությունը, որը նախ և առաջ էթնիկական ճիշտ փոխանցման երևույթ է և նոր միայն անձնական հայացքների ու դիրքորոշումների արտահայտություն:

Քառօրյա պատերազմը փոխել է նաև կոնֆլիկտի եույթյան նախկին նշանակությունը: Կոնֆլիկտի տրանսֆորմացիան պետք է փոփոխություն կրի երկու կողմերի, բայց հիմնականում Ադրբեջանի մոտ: Խոսքը դիրքորոշումների ու շահերի փոփոխության մասին է: Կոնֆլիկտի լուծման համար պետք է հաղորդակցության մեջ մտնել, որովհետև կոնֆլիկտը մարդկանց հոգում և մտքում է և այստեղ պետք է իրականում փոփոխություններ կատարվի: Կոնֆլիկտը չի կարող լուծվել զինված կամ տեղեկատվական ահաբեկչական ակտերի միջոցով, իսկ մենք ունենք քառօրյա պատերազմի հասցեական գնահատականների անհրաժեշտություն: Պետք է հրապարակային վերլուծության ենթարկվեն արված սխալները, գնահատվեն բոլոր ճիշտ ու ռացիոնալ գործողությունները, որպեսզի կառուցողական ու դաստիարակչական էֆեկտ ունենա արժեքների տրանսֆորմացիան, մի բան, որը յուրատիպ հոգեթերապիա կլինի ահաբեկչական ակտի հետևանքները հաղթահարելու գործում:

---

<sup>1</sup> Նույն տեղը:

## **Լուսինե Ղարախանյան**

### **ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱՉՄԸ՝ ԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ԱԿՏ**

**Բանալի բառեր՝** մանիպուլյատիվ հնարք, ահաբեկչական ակտ, գոհի սոցիալական դեր, արժեքների տրանսֆորմացիա, զանգվածային կոնֆորմիզմ

Ապրիլի 2-ին սանձազերծած պատերազմն ունեցել է կառուցողական և ապակառուցողական էֆեկտներ, սակայն այն որպես այդպիսին ահաբեկչական ակտ էր՝ ինչպես կոնկրետ պատերազմական գործողություններով, այնպես էլ տեղեկատվական մանիպուլյատիվ հնարքների կիրառմամբ:

Առանց ռացիոնալ փաստարկման կարող են շարժման մեջ դրվել մարդկանց իռացիոնալ հոգեկան ուժերը, ինչը նպաստում է գահզվածային կոնֆորմիզմի առաջացմանը: Հենց այսպիսի տեղեկատվական իշխանության տակ մարդիկ կարող են իռացիոնալ որոշումներ կայացնել, ինչը նշանակում է թիկունքում անկազմակերպ վարք որդեգրել: Քառօրյա պատերազմի, առանձին անձանց ու գործողությունների հետևանքները պետք է մանրակրկիտ հոգեբանական վերլուծության ենթարկվեն: Ահաբեկչական ակտի հաղթահարումը հնարավոր է արժեքների ճիշտ փոխանցման ճանապարհով:

## **Лусине Караханян**

### **ЧЕТЫРЕХДНЕВНАЯ ВОЙНА КАК ТЕРРОРИСТИЧЕСКИЙ АКТ**

**Ключевые слова:** *манипулятивный трюк, террористический акт, социальная роль жертвы, трансформация ценностей, массовый конформизм*

Война, развязанная 2-го апреля, имела как конструктивные, так и деструктивные последствия, однако сам по себе это был террористический акт, как в плане конкретных военных действий, так и в плане применения информационных манипулятивных трюков.

Человеческие иррациональные психические силы могут быть приведены в действие без рациональных аргументов, что в свою очередь способствует возникновению массового конформизма. Именно под властью подобной информации люди могут принимать иррациональные решения, что означает неорганизованное поведение в тылу. Последствия поступков отдельных лиц и действий в течение четырехдневной войны должны быть подвержены тщательному психологическому анализу. Преодоление террористического акта возможно путем правильного трансфера ценностей.

*Lusine Gharakhanyan*

## **THE FOUR-DAY WAR - AN ACT OF TERRORISM**

**Key words:** *manipulative trick, terroristic attack, victim's social role, transformation of values, mass conformism*

The war broken out on April 2, had constructive and destructive effects, but it was actually a terroristic attack, as such with both military actions and by using informative and manipulative tricks. Human irrational and sacred forces may be put into action without rational explanation which supports the coming out of mass conformism. People can make irrational decisions under such informative rule which means to adopt unorganized behaviour in the back.

The consequences of 4 days war, special persons and actions must be psychologically analyzed in details. The overcome of the terroristic attack is possible via the correct transmission of values.